

ԶԵԿՈՒՑՈՒՄ CalWORKs ԵՎ CAL-FRESH ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Table with 2 columns and 3 rows: ԳՈՐԾԻ ԱՆՈՒՆԸ, ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐԸ, ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐԸ

Քանի որ դուք ստանում եք CalWORKs նպաստ, դուք պետք է 10 օրվա ընթացքում մեզ զեկուցեք այն դեպքում, երբ ձեր եկամուտների ԸՆԴՀԱՆՈՒՐ գումարը հասնում է որոշակի մակարդակի:

Եթե ստանում եք CalWORKs նպաստ, ապա դուք ՊԵՏՔ Է ՆԱԵՎ զեկուցեք հետևյալի մասին 10 օրվա ընթացքում դրանք տեղի ունենալուց հետո.

Form with fields: Ձեր ընտանիքի անդամների քանակը կազմում է, Ձեր ընթացիկ եկամուտը կազմում է \$, Ձեր IRT-ն կազմում է \$

- 1. Ամեն անգամ, երբ ձեր ընտանիքի անդամների կազմը փոխվում է:
2. Ամեն անգամ, երբ պարզվում է, որ ձեր ընտանիքին միացող նոր անդամը (կամ ներկայումս գոյություն ունեցող անդամներից մեկը) մեղադրվում է թմրադեղերի հետ կապված հանցանք գործելու մեջ, որի մասին նախկինում չէք զեկուցել:
3. Ամեն անգամ, երբ պարզվում է, որ ձեր ընտանիքին միացող նոր անդամը (կամ ներկայումս գոյություն ունեցող անդամներից մեկը) խախտել է դատարանի որոշմամբ նախատեսված փորձաշրջան անցնելու կամ պայմանական վաղախետ ազատման պայմանները:
4. Ամեն անգամ, երբ պարզվում է, որ ձեր ընտանիքին միացող նոր անդամը (կամ ներկայումս գոյություն ունեցող անդամներից մեկը) թաքնվում է իրավապահ մարմիններից:
5. Ձեր հասցեի յուրաքանչյուր փոփոխության դեպքում:

Ինչպե՞ս զեկուցել:

Եթե ձեր ընդհանուր եկամուտը գերազանցում է վերը նշված IRT-ի արժեքը, ապա դուք պետք է այդ մասին զեկուցեք Շրջանի մարմիններին 10 օրվա ընթացքում: Դուք այդ տեղեկությունները կարող եք տրամադրել Շրջանի մարմիններին զանգահարելու միջոցով կամ գրավոր տեսքով:

Եթե ստանում եք CalFresh նպաստ, ապա դուք ՊԵՏՔ Է ՆԱԵՎ զեկուցեք հետևյալի մասին 10 օրվա ընթացքում դրանք տեղի ունենալուց հետո.

«Ամսական ընդհանուր եկամուտի» տակ մենք հասկանում ենք.

- 1. CalWORKs-ի համար պահանջվող բոլոր պարտադիր զեկույցներ, բացի IRT-ից (տես 1-5 կետերը վերևում):
2. Ձեր եկամուտների աղբյուրի փոփոխության դեպքեր, ներառյալ աշխատանքի անցնելը, աշխատանքից ազատվելը կամ աշխատանքային պայմանների փոփոխումը:
3. Վաստակած եկամուտի փոփոխություն ավելի քան \$100-ով:
4. Չվաստակած եկամուտի փոփոխություն ավելի քան \$50-ով (բացառությամբ CalWORKs-ի կամ Ընդհանուր աջակցության):
5. Վարձակալության կամ կենցաղսպասարկման վճարների փոփոխություն (միայն տեղափոխվելու դեպքում):
6. Դատարանի որոշմամբ երեխայի խնամքի համար վճարվող գումարի փոփոխություն:
7. Եթե դուք հանդիսանում եք առանց խնամառուների աշխատունակ չափահաս անձ (ABAWD), ապա պարտավոր եք զեկուցել բոլոր այն դեպքերի մասին, երբ ձեր աշխատանքային կամ ուսուցման ժամերի քանակը նվազում է շաբաթը 20 կամ ամիսը 80 ժամից:

- ⇒ Ձեր կողմից ստացվող բոլոր դրամական միջոցները (ինչպես վաստակած, այնպես էլ չվաստակած):
⇒ Գումարը մինչև բոլոր տեսակի հանուժներ կատարելը: (Հանուժների օրինակներն են. հարկերը, Սոցիալական ապահովագրության կամ կենսաթոշակային այլ վճարները, կալանքի տակ գտնվող գումարները և այլն)

Ի՞նչ է տեղի ունենալու:

Տեղեկություններ կամավոր զեկույցների մասին

- ⇒ Ձեր նպաստները նվազեցվելու կամ դադարեցվելու են՝ կախված IRT-ն գերազանցող եկամուտների գումարի չափից:
⇒ Ձեր IRT-ն կարող է փոխվել ձեր եկամուտների կամ ընտանիքի անդամների կազմի փոփոխման դեպքում:
⇒ Ձեր IRT-ի յուրաքանչյուր փոփոխության մասին Շրջանի մարմինները ձեզ կտեղեկացնեն գրավոր տեսքով:
⇒ Ձեր տարեկան Վերանայման/Վերասերտիֆիկացման (RD/RC) ժամանակ Դուք պարտավոր եք նաև զեկուցել RD/RC ձևաթղթում պահանջվող բոլոր եկամուտների մասին՝ նույնիսկ եթե դուք նախկինում արդեն զեկուցել եք այդ դրամական միջոցների մասին:

Փոփոխությունների մասին ցանկացած պահին կարող եք Շրջանի մարմիններին զեկուցել նաև ինքնակամ: Որոշ փոփոխությունների մասին զեկուցելը կարող է ձեզ համար ապահովել նաև լրացուցիչ նպաստներ: Օրինակ՝

Տույժեր չզեկուցելու համար

Եթե դուք չզեկուցեք այն մասին, որ ձեր եկամուտները գերազանցել են ձեր ընտանիքի IRT սահմանաչափը, ապա դուք կարող եք ստանալ ձեզ հասանելի գումարը գերազանցող նպաստներ: Դուք պետք է փոխհատուցեք ձեր կողմից ստացված ավելորդ նպաստները՝ հիմնվելով ձեր կողմից չզեկուցված եկամուտների չափի վրա: Լրացուցիչ նպաստներ ստանալու նպատակով միտումավոր չզեկուցելը համարվում է խարդախություն և կարող է հետապնդվել քրեական կարգով:

- Ընտանիքի անդամներից մեկի հղիանալու դեպքում:
• Երբ դրամական օգնություն ստացողներից մեկի մոտ առաջանում է հատուկ կարիք, օրինակ. հղիության, բժշկի կողմից նշանակված հատուկ սննդակարգի, արտակարգ իրավիճակների առաջացման դեպքերում և այլն:
• CalFresh-ի համար՝ եթե որևէ հաշմանդամ կամ 60 տարեկանը լրացած անձ կրում է նոր կամ ավելի բարձր կանխիկ վճարվող բուժապասարկման ծախսեր: